

ՆՅՈՒԹԵՐ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՐԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հ. Մ. ԴԱՎԹՅԱՆ

Հայտնի է, որ անցյալ դարի առաջին տասնամյակներում, Անդրկովկասի մի մասը Ռուսաստանին միանալուց և հայկական ուսումնական հաստատություններ հիմնադրվելուց հետո, նպաստավոր պայմաններ ստեղծվեցին արևելահայ աշխարհաբարի զարգացման համար: Վկայություններ կան, որ Ներսիսյան դպրոցի ուսուցիչները, թեև ոչ պաշտոնապես, ուսուցումը հնարավոր դարձնելու անհրաժեշտությունից ելնելով, ստիպված էին իրենց դասախոսությունները շարադրել աշխարհաբար և ձեռագիր տետրակները տալ աշակերտներին արտադրելու¹: Ժամանակին նշանավոր բանաստեղծ Ռ. Պատկանյանը պահանջում էր «արարատյան» աշխարհաբարի «եթե ոչ ստեղծողը, գեթ կերպարանք և շքեղություն տվողը Մ. էմինին ճանաչել»²:

Ուշագրավ է, սակայն, մի ուրիշ հանգամանք: էմինի մասին իր հուշերում Ռ. Պատկանյանը դարմանք է հայտնում, թե շնայած նա գեղեցիկ ու մաքուր խոսում էր աշխարհաբար, բայց չէր ուզում նրան ժողովրդայնության ընթացք տալ, ճանաչել նրա իրավական գոյությունը: Այս նույնը հաստատում է նաև էմինի կենսագիր Երվանդ Շահադիզը³: էմինի այս մոտեցումը բաժանում էին նաև մյուս հայկաբան դասախոսները: Մ. Սալլանթյանցը, օրինակ, դեռևս 1830 թ. գրաքննիչի պաշտոնում, թույլատրել է Շուշիի բողոքականների «Ավետարանի զորությունը» և ուրիշ աշխարհարար գրքույկների հրատարակությունը, այնինչ ինքը մոլի գրաբարյան էր և չի գրել աշխարհաբար թեկուզ մեկ տող:

Աշխարհաբար գրելուց կամ տպագրելուց խուսափելը երևում է նաև նրանից, որ ոչ Լազարյան ճեմարանը, ոչ էլ Ներսիսյան դպրոցը, որոնք սեփական տպարաններ ունեին, մինչև հիսունական թվականներն ինքնուրույն աշխարհաբար ուսումնական ձեռնարկներ կամ ընթերցանության գրքեր չհրատարակեցին, թեև արևմտահայ մշակութային կենտրոնները վաղուց արդեն նման օրինակներ ունեին և բազմաթիվ հիշատակություններ կան, որ այդ գրքերը հասնում էին էջմիածին, Տփղիս, Մոսկվա: Ծիշտ է, այդ տարիներին Լազարյան ճեմարանի տպարանում լույս են ընծայվել տասներկու անուն աշխարհաբար գրքույկներ (երկուական 1830—1831 թթ., մեկը 1834-ին և յոթը 1840 թ.), բայց դրանց հրատարակիչները Շուշիի բողոքականներն են: Տպարանը կատարել է սոսկ պատվիրակատարի դեր՝ շահագրգռված միայն տպագրության համար ստացվող եկամուտով:

¹ Աղ. Երիցյան, Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հոգևոր դպրոցի, հ. Ա, Տփղիս, 1898, էջ 112—114:

² Ռ. Պատկանյան, Երկասիրություններ, հ. 3, Դոնի-Ռոստով, 1904, Բ էջակալություն, էջ 10:

³ Երվ. Շահադիզ, Մկրտիչ Հովսեփյան էմին, կենսագրական տետրություն, Տփղիս, 1900, էջ 25:

Ներսիսյան դպրոցը ևս մինչև 1850 թ. ձեռնպահ մնաց նոր լեզվով տպագրելուց: Բացառությամբ էն 1827 թ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ տպագրված մի կանոնադրություն («Առաջադրություն հայոց նոր սարքվող զորքի համար») և Հակոբ Կարենյանցի 23 էջանոց մի գրքույկը, որի մասին կխոսվի ստորև: Աշխարհարար գիրք տպագրելն այստեղ այնքան անհանդուրժելի էր, որ Վրաստանի թեմի վիճակավոր առաջնորդ Կարապետ Արքեպիսկոպոսի կարգադրությամբ Վենետիկում 1839-ին տպագրված՝ Եփրեմ Սեթյանի Հայոց պատմության աշխարհաբար դասագիրքը թարգմանվեց գրաբար և լույս ընծայվեց 1843-ին, Ներսիսյան դպրոցի տպարանում:

Արդ, ինչո՞վ բացատրել բանավոր աշխարհաբարի ծաղկման և գրավորի ծայր աստիճան անհանդուրժելի լինելը: Արտաքինից հակասական թվացող այս երևույթը բացատրվում է հետևյալ հանգամանքով: Դարեր շարունակ պետականությունից զուրկ հայ ժողովրդի ազգային, հավաքական շահերի պաշտպանն ու գերագույն տնօրենը, թեև սահմանափակ իրավունքներով, էջմիածնի ամենայն հայոց կաթողիկոսությունն էր: Անգամ 1836 թ. մարտի 11-ի «Կանոնադրությունից» («Положение») հետո, երբ էջմիածնի իրավունքներն ավելի սահմանափակվեցին, դավանական, կրթական և ուսումնական հարցերում էջմիածինն այնպիսի հեղինակություն էր, որ նույնիսկ նրա հետ վարչական կապ չունեցող լազարյան ճեմարանը գաղափարական հարցերում գտնվում էր նրա ազդեցության ներքո: Իսկ էջմիածնի պաշտոնական, կրոնական հայեցակետով հայոց հին լեզուն՝ գրաբարը, աստվածային, սուրբ լեզու էր, Ադամի լեզուն, ուստի և ամենից առաջ հայ լուսավորչական եկեղեցու լեզուն: Գրաբարի պահպանման հարցը նույնացվում էր ազգապահպանման, ազգային մշակույթի ու ավանդների պահպանման հետ: Իրականում, ինչպես դեռ Արուստան է ժամանակին բացատրել, տգետ ու խավարամիտ հոգևորականությունը գրաբարը դարձրել էր «եզիպտական գաղտնիք, որպեսզի ժողովրդի աչքում ավելի դիրք ու ակնածություն ձեռք բերի»⁴:

Ինչպես դավանական այլևայլ խնդիրներում, լեզվի հարցում ևս, հայ լուսավորչական եկեղեցին ներհակ դիրք էր բռնում այն ամենի նկատմամբ, ինչ ընդունելի էր կաթողիկոսյան և բողոքականության կողմից: Եվ քանի որ այդ դավանանքների հայ կողմնակիցները հանդուրժում էին աշխարհաբարը, ապա հայ լուսավորչական եկեղեցու համար միանգամայն մերժելի էր նաև այդ լեզուն: Իհարկե, հայ կաթողիկոսները և բողոքականները երբեք աշխարհաբարը դրական լեզու դարձնելու միտում չեն ունեցել: Առաջինները այն դիտում էին որպես գրաբարը տարածելու, հասկանալի դարձնելու միջոց, իսկ երկրորդներին հետաքրքրում էր միմիայն ժողովրդին սիրաշահելու, առավել հեշտ ճանապարհով իրենց կողմը գրավելու, իրենց դավանանքը ընդունելի դարձնելու խնդիրը: Հայ եկեղեցու բարձրագույն մարմնի բռնած այս դիրքն էր արևելահայերենը գրական լեզու դարձնելն արգելակելու հիմնական պատճառը: Մյուս կողմից, դպրոցների բացումը, մտավոր զարթոնքը, մշակութային վերելքը, մի խոսքով, դեպի առաջ ընթացող կյանքի պայմանները նպաստում էին ընդհանուրին հասկանալի, բանավոր լեզվի գործածությանն ու զարգացմանը:

⁴ Խ. Արուստան, ԵՊԺ, հ. 5, Երևան, 1950, էջ 46:

Մինչ էջմիածնին անմիջականորեն ենթակա վայրերում գրական աշխարհարարի ճանապարհը ամուր պատնեշված էր, էջմիածնի իրավասությունից դուրս կամ նրանից հեռու գտնվող արևմտահայ մշակութային կենտրոններում գրական աշխարհագրարը (արևմտահայ ճյուղը) հղկվում, հասունանում էր, դառնում մամուլի ու գրքի լեզու։ Կ. Պոլսի պատրիարքությունն, օրինակ, անմիջականորեն ենթարկվելով Բ. Դուռնը, շատ անգամ գործում էր էջմիածնից անկախ և աշխարհագրարով գրելը մեղք չէր համարում։

Կար նաև մի այլ գործոն։ Վենետիկի ու Վիեննայի Մխիթարյանները, Զմյուռնիայի բողոքական քարոզիչները աշխարհարար գրքերով ու պարբերականներով լցրել էին հայաշատ կենտրոնները։ Հայ եկեղեցու առավել առողջամիտ ներկայացուցիչներն ու ազգային գործիչները այլադավանության դեմ պայքարը չէին կարող իրականացնել գրաբարի միջոցով։ Նրանք ևս գրաբարը գրքի, դրականության և ապագա խոսակցական լեզու համարելով, ստիպված էին առայժմ իրենց մամուլում ու գրքերում ժողովրդի հետ խոսել նրան հասկանալի լեզվով։ Շատ դպրոցներում դասավանդումը տարվում էր աշխարհագրարով։ Այս առումով առաջնությունը պատկանում է Զմյուռնիայի Մեսրոպյան վարժարանին։ Աշխարհագրարով գրվել էին անգամ քերականություններ։ Դեռևս 1727 թ. Մխիթար Սեբաստացին հրատարակել էր արևմտահայերենի առաջին քերականության ձեռնարկը, 1760-ին նշանավոր բանաստեղծ Բաղդասար Դպիրը գրաբարի քերականությունը շարադրել և հրատարակել էր աշխարհագրարով։ Այնուհետև, աշխարհարար էր 1808 թ. Կ. Պոլսում հրատարակված Մեսրոպ Տեր-Հարությունյանի գրաբարի քերականության համառոտությունը։ Դրանից հետո արևմտահայ կենտրոններում աշխարհագրար քերականություններ կամ այլ գրքեր հրատարակելը հազվագյուտ բան չէր։

Այս պայմաններում, XIX դարի սկզբներից, տարեցտարի բազմապատկվեց աշխարհագրար հրատարակությունների թիվը։ Արդյունքն այն եղավ, որ անցյալ դարի առաջին կեսին հրատարակված շուրջ 315 անուն աշխարհագրար գրքերից արևելահայերեն են միայն 39-ը։ Սրանցից 26-ը տպագրել են բողոքականները Շուշիում ու Մոսկվայում, 1-ը Զմյուռնիայի բողոքականները («Սաղմոս»), 5-ը լույս են տեսել Տփղիսում (որոնցից երեքը պետական-կառավարական հրատարակություններ են՝ «Առաջադրություն հայոց նոր սարգվող գործի համար», «Կանոնք գործածականք» և «Կանոններ Ղրուղինո-Իմերետինսկի Ղուբերենիայի», ապա՝ Խ. Աբովյանի «Նախաշավիղը» և Հակոբ Կարենյանցի «Ճառը»), 5-ը Կալկաթայում («Խտրադիմա դժրողության», «Հասարակախոսություն ի վերա խտրադիմայի դժրողության», «Արամայիս» և երկու կրոնական գրքույկներ, որոնք մեր ձեռքը չեն ընկել), մեկական գրքեր էլ տպագրվել են Մոսկվայում (Մանվել վարդապետի «Դպրության մանկանց» այբբենարանը) և Աստրախանում («Նորագույն վրույցը»)։

Հատկանշական է նաև պարբերականների լեզվի պատկերը։ Հայ լրագրության սկզբից մինչև XIX դարակեսը հրատարակված 30 պարբերականից տասն են լույս տեսել Արևելյան Հայաստանի հետ կապված վայրերում և դրանցից միայն մեկի, 1850 թ. լույս տեսնող «Արարատ» ամսագրի ընդունած լեզուն է աշխարհագրար, մնացած ինը գրարարալեզու են (սրանցից մեկը՝ Թաղիադյանի «Ազգասերը» իր գոյության սկզբի 6 ամիսներում աշխարհագրար էր, իսկ հետո՝ գրաբար)։ Այնինչ Արևմտահայ կենտրոններում 1800 թվականին և հետո լույս

տեսած երկու տասնյակ պարբերականներից և ոչ մեկի լեզուն գրաբարը չի եղել:

Անցյալ դարի քսանական թվականներին օտարերկրյա բողոքականներին հաջողվեց իրենց դավանանքը տարածել հայ բնակչության մի աննշան մասի մեջ այնպիսի պայմաններում, երբ էջմիածինն ի վիճակի չէր հակազդել նրանց յլրա: Ցարական կառավարության արտոնություններ բողոքականները Շուշիում հաստատվել էին դեռևս 1820-ական թվականներին և արդեն ունեին տպարան ու դպրոց: Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո առաջին երկու երեք տարիներում նրանք գործում էին ղզուշորեն, իրենց բուն նպատակը քողարկելով «լուսավորության» ու «բարեգործության» շղարշով: Սակայն երբ նրանց գործունեությունը ծավալվելով վտանգավոր դարձավ, էջմիածինը վճռական քայլերի դիմեց և կառավարության միջոցով բողոքականները վտարվեցին Անդրկովկասից: Թ. Գուշակյանը իր «Հնդկահայք» աշխատության մեջ Մադրասի հայկական եկեղեցու այդ տարիների մի ժողովի արձանագրությունից քաղել է հետևյալ փաստը. երբ մադրասահայերը լսում են, թե Շուշիի բողոքականները մտադիր են Աստվածաշունչը «ռամիկ հայերենի» վերածել, դպրոցներ բանալ և ուսուցումը աշխարհաբարով վարել, նման ձեռնարկների մեջ տեսնում են գրաբարին սպառնացող վտանգ, ժողովրդի կրոնական զգացմունքների թուլացում, ազգի հին ու նոր սերնդի միջև գոյություն ունեցող կապի խզում, և դիմում են ժամանակի կաթողիկոս Հովհաննես Կարբեցուն, խնդրելով՝ «... որ այդ շարժումը չեզոքացնելու համար դպրոցներ և տպարաններ բանալ ամեն կողմ, առաջիններով ալգային սերունդը ազգային կրթությամբ դաստիարակելու, և երկրորդներով ընտիր գրքեր նախնյաց լեզվով տպագրելու, և այսպես գրաբարը ջնջվելի փրկելու համար»⁵:

Բողոքականները, իրոք որ, երկպառակության որմեր սերմանելով ջլատում էին հայ ժողովրդի ազգային միասնությունը: Ժողովուրդը գիտակցելով այդ, չընկավ խնամքով հյուսած որոգայթը, մերժեց նրանց և՛ դավանանքը, և՛ այն ամենը, ինչ «լուսավորության» անունով բերում էին: Արձագանք չգտան և անուղադրության մատնվեցին նաև հայ սակավաթիվ կողմնակիցների հետ պատրաստած նրանց աշխարհաբար հրատարակությունները:

Համընդհանուր հակակրական այդ տրամադրություններն օգտագործելով, հետագայում փառամու, խորամանկ ու խավարամիտ Հովհաննես Կարբեցին լուսավորիչ-դեմոկրատ Թադիադյանի և ապա ն. Աբովյանի դեմ պայքարելիս նրանց անվանարկում էր այլադավան, լուրջալիկա պիտակներով:

Աբովյանի խորին համոզմամբ ժողովրդին դարավոր քնից, հետամնացությունից հանելու միջոցը գրականությունն էր, լուսավորությունը: Իսկ դեպի գրականություն ու լուսավորություն տանող միակ ուղին, աշխարհաբարը դպրոցի ու գրավոր լեզու դարձնելն էր: Եվ իր գործունեության առաջին իսկ օրից նա ձեռնամուխ եղավ այդ գաղափարի իրագործմանը. «Սկսած այն պահից, երբ հայրենիքիս պատանիներին կրթելը իմ կյանքի նպատակն էմ դարձրել,— գրել է նա Ֆր. Բոդենշտեյնին ուղարկվելիք բանաստեղծությունների տետրակի բացատրականում,— իմ նվիրական գաղափարներից մեկն է եղել հայոց ժողովրդական լեզուն դարձնել գրականության լեզու և մտցնել դպրոց—

5 Թ. Գուշակյան, Հնդկահայք, Երուսաղեմ, 1941, էջ 65:

ները, որովհետև հինը որքան էլ մաքուր ու հարուստ է, այնուամենայնիվ ոչ որի համար այլևս հասկանալի չէ»⁶:

Գրաբարը մերժելը և աշխարհագրարը միանգամից պաշտոնական լեզու ճանաչելը մտավոր կյանքի մեծ հեղաշրջում էր նշանակում: Նման պահանջը հոգևորականությունը դիտեց իբրև միջամտություն եկեղեցու գործերին, իբրև հերետիկոսության նման ծանր հանցանք: Ահա թե ինչու այնպիսի կատաղի դիմադրության հանդիպեց իր կյանքը բոլորանվեր ազգին նվիրաբերելու պատրաստ, Դորպատից վերադարձած լուսավորիչը: Թերևս հալածանքները սուր բնույթ չկրեին, եթե Արովյանը բավարարվեր, ասենք, իր մասնավոր դպրոցում աշխարհագրար ուսուցանելով, եթե այդ լեզուն հայկական բոլոր դպրոցներում պարտադիր դարձնելու մասին իր համոզմունքները համահասարակական խնդիր չդարձնելու: Ասկայն Արովյանը փափուկ պաշտոնի, հարմարավետ կյանքի մարդ չէր: Նա այն հազվագյուտ մեծություններից էր, որոնք ճշմարտությանը հասնելու խիզախությանն են դիմում թեկուզ կյանքի գնով: Նա գրեց աշխարհագրար դասագիրք, փորձեց տպագրել և հաստատել տալ լուսավորության միևնույնությունում: Ասկայն ցարական շինովնիկներն իրենց ըմբռնումներով ու դասակարգային շահերով մոտ լինելով հոգևորականությանը, մերժեցին նրան և Արովյանը ի վերջո պարտվեց: Այս էր հայ հոգևորականության և Արովյանի բախման հիմնական պատճառներից մեկը:

Արովյանի ժամանակ գոյություն ուներ նաև գրական, այսինքն գրքի լեզու դարձած աշխարհագրարը: Այլ խնդիր է, թե ինչպիսին էր և զարգացման ինչ աստիճանի վրա էր գտնվում այն: Հայ նոր գրականության և լեզվի պատմության համար կարևոր այս հարցը դեռևս հանգամանորեն չի լուսաբանվել: Դրա պատճառներից մեկն էլ սկզբնաղբյուրների անբավարար ուսումնասիրությունն է: Որքան էլ տարօրինակ է, մինչև օրս էլ բանասերների ու մասնագետների տեսադաշտից դուրս են մնացել արևելահայերենով տպագրված մի քանի կարևոր հրատարակություններ: Քանի որ ներկա հոգվածի հիմնական նպատակներից մեկը մասնավորապես այդ հրատարակությունները հանրությանը ծանոթացնելն է, ուստի կանգ չենք առնի այն աշխարհագրար գրքերի վրա, որոնց մասին գրական ու բանասիրական ուսումնասիրություններում շատ է խոսվել:

Դեռևս մեր դարասկզբին Գրիգոր Վանցյանը իր «Պատմական քերականություն արևելահայ լեզվի» աշխատության մեջ հիշատակեց բազելցի բողոքական քարոզիչների կողմից 1832—1840 թթ. ընթացքում Շուշիում և Մոսկվայում հրատարակված հինգ աշխարհագրար գրքույկներ և տիրապետող դարձավ այն կարծիքը, թե դրանք անցյալ դարի առաջին կեսի համարյա միակ աշխարհագրար տպագիր գրքերն են, իսկ դրանց լեզուն գերազանցում է նույնիսկ հետագա տասնամյակների գրական աշխարհագրարին:

Վերջին տարիներում հայ տպագիր գրքի և աշխարհագրար գրքի մատենագիտությունները կազմելիս պարզվեց, որ բողոքականների հրատարակություններից բացի տպագրվել են այլ աշխարհագրար գրքույկներ ևս: Առաջմ մեզ հայտնի են 1840—42 թթ. տպագրված երկու այդպիսի գրքույկներ, որոնցից մեկի լեզուն համեմատաբար մաքուր ու կանոնավոր է և իր հստակությամբ չի զիջում, այլ որոշ առումով, գերազանցում է բողոքականների հրատարակու-

6 Խ. Արովյան, ԵՎԺ, հ. 7, Երևան, 1956, էջ 390:

թյունների լեզվին: Դա գյուղատնտեսական կուլտուրաների մշակման կանոններ են՝ «Կանոնք գործածականք» վերնագրով: Հրատարակել է պետության կողմից Տփղիսում հիմնադրած գյուղատնտեսական կուլտուրաների և մանուֆակտուրային արտադրությունը խրախուսող Անդրկովկասյան ընկերությունը, 1842 թ., Հ. և Դ. Արզանյանց եղբայրների տպարանում: Հեղինակը ընկերության նախագահ, բժիշկ Եսայի Տեր-Ղուկասյանն է:

Ահա մի նմուշ այդ գրքուկի առաջին պարբերությունից. «Լեղակի խոտն (էնտիկո, չիվիա) բուսանում է շատ ջերմ և արևադարձի մոտ երկրներում և յուր թանկագին կապույտ ներկովն, որ լեղակ կոչի, դարձյալ է (դարձել է —Հ. Դ.) մին երևելի առարկա ներքին ազգային վաճառականության Չինումաչինու, Հընդըստանու և Ամերիկու գավառներումը: Եգիպտոսի փաշեն, որ մեկ երկարատև և շահախնդիր անձն է, մյուս այլ այսպիսի պիտանի բուսաց հետ՝ ցանել տվեց յուր երկրումն մեծ քանակությամբ և լեղակի խոտ, որով շատ հարստացրեց յուր ներքին վաճառականությունը: Ցանկանալով տարածել այս պատվական և բազմաշահ բուսո ցանքսը և Կովկասու սարերի այս կողմում և այսու հարստացնել տեղվույս առևտուրն՝ Միաբանությունն ագարակային տնտեսության և վաճառականության 1834 թվականից սկսել էր զանազան փորձեր առնել լեղակ ցանելու...»⁷:

Բաղդատության համար բերենք նաև երկու օրինակ բողոքական քարոզչիների հրատարակություններից. «Ամեն ով որ մեղքովն ծիծաղում է, նա ծաղր է անում, դեռ քանի որ աստված բարկանում է: Աստված ամեն օր բարկանում է չար մարդկանց վերա... էն ի՞նչ է, որ նորա բարկությունն վեր է կացնում: էն ի՞նչ է, որ նորանով նորա հոգին տանջվում է և չարչարվում: էն ի՞նչ է, որ վրեժխնդրության սուրբ կախել է տալիս մեղավոր մարդկանց գլխի վերա: Ականջ դիր աստուծո խոսքին և իմաց թե աստուծո բարկությունն երկնքիցն կը հայտնվի մարդկանց ամեն ամբարշտության և անիրավության վերա»⁸:

Մեկ տասնամյակ հետո՝ 1843 թ. Ձմյուռնիայի բողոքականները նույնպես արևելահայերենով հրատարակել են մի «Սաղմոս», որի լեզուն ոչնչով չի զանազանվում Շուշիի բողոքականների գրքերի լեզվից: Քանի որ այս գիրքը ևս հետաքրքրություն է ներկայացնում արևելահայերենի պատմության համար, բերենք մի քաղվածք էլ նրանից. «Երանելի է էն մարդն, որ ամբարշտների խորհրդին մեջ չի գնում և մեղավորների ճանապարհին վերա չի կանգնում և չար ծաղրածողների աթոռին վերա չի նստում: ...Եվ նա է ինչպես շրերի դնացքումն տնկած ծառ, որ իրան պտուղն տալիս է իրան ժամանակումն և նորա տերևն չի վերթափվում, և ամեն ինչ որ անում է, հաջողվում է նորան: էնպես չեն ամբարշտներն, այլ ինչպես դարմանի մղեղ, որ քամին ցրիվ է տալիս նորան»⁹:

Արևելահայ գրական աշխարհաբարը գտնվում էր զարգացման նախնական շրջանում: Այդ պատճառով էլ թե՛ Տեր-Ղուկասյանի և թե՛ բողոքականների լեզուն խճողված է գրաբար և բարբառային տարրերով, քերականական ճիշտ ձևերի կողքին հանդիպում են սխալ կիրառումներ: Օրինակ, եթե բողոքականների գրքերում ընդունված է ցուցական դերանունների բարբառային ձևերը՝

7 Ե. Տեր-Ղուկասյան, Կանոնք գործածականք, Տփղիս, 1842, էջ 5:

8 Մեղքն խաղ անելու բան չէ, Շուշի, 1833, էջ 5:

9 Գիրք սաղմոսաց, Ցեբրայական բնագրէ ի հասարակ լեզու հայոց թարգմանեալ, Ձմյուռնիա, 1843, էջ 1:

էս, էդ, էն և այլն, իսկ շատ բայաձևեր ճիշտ կիրառում ունեն, ապա Տեր-Ղուկասյանի մոտ, ընդհակառակը, հիշյալ դերանունները և նրանցով կազմված բառերը աշխարհաբարում ընդունված եղանակով են, իսկ որոշ բայաձևեր՝ գրաբարյան (առնել, փոխանակ՝ անել և այլն)։ Մի բան, սակայն, ակնհայտ է։ Եթե բողոքականների լեզուն միօրինակ է, կրոնա-բարոյական հարցերին վերաբերող սահմանափակ բառապաշարով, ապա Տեր-Ղուկասյանի գրքույկի լեզուն համեմատաբար հարուստ է բուսաբանական, աշխարհագրական, տնտեսական հարաբերություններ արտահայտող բառերով, և դրանով իսկ նախընտրելի բողոքականների լեզվից։

Ո՛չ Տեր-Ղուկասյանի, ո՛չ էլ բողոքականների լեզուն չեն կանխում ժամանակը։ Պետք էր դիտելիքների մեծ պաշարի, առաջադեմ աշխարհըմբռնման տեր մի տաղանդ ու գեղագետ, որպեսզի իմի բերեր ժամանակակից բանավոր ու գրավոր աշխարհաբարի բոլոր հնարավորությունները և ստեղծեր այնպիսի լեզու, որ օրինակելի լիներ հետագա տասնամյակների համար։ Այդպիսի մեկը հայ իրականության մեջ եղավ Աբովյանը։

Մեր խնդրից դուրս է անդրադառնալ ժամանակին անտիպ մնացած Աբովյանի աշխարհաբար գրվածքների լեզվի հարցին (որի մասին շատ է խոսվել գրականագիտական ու լեզվաբանական ուսումնասիրություններում), նշենք միայն, որ նա իրոք թողել է այդպիսի լեզվի նմուշ։ Այդպիսին է Ռուսսոյի «Նոր էլիզա» վեպի թարգմանության հատվածը. «Պետք է քեզանից հեռանամ, դժուար պատվական, իմ սիրտը լավ զգում է։ Պետք է քեզանից կամ միանգամայն հույսս կտրեմ, կամ ավելի լավ է՝ որ քեզ երբեք չտեսնիմ։ Բայց ի՞նչ անեմ այժմ, ի՞նչպես համբերեմ։ Դու ինձ քո բարեկամությունը խոստացել ես. քննիր իմ դառն վիճակը և խորհուրդ տուր ինձ»։

Մեզ ծանոթ կառավարական-պետական մյուս հրատարակությունը Անդրեկովկասի բնակչության շարժական և անշարժ ունեցվածքի վրա պետական հարկեր սահմանելու օրենքների ժողովածու է՝ «Կանոններ Ղրուզինո-Իմերեթինսկի ղուբերնիայի նահանգական և շատից դուրս ելած քաղաքներումը մուլքերից ստանալի մտախիլները կարգելու համար» անունով։ Հրատարակվել է դարձյալ Տփղիսում, Արգանյանցիների տպարանում։ Թեև գրքում տպագրության տարեթիվը չի նշված, բայց բովանդակությունից (Վրացա-Իմերեթական նահանգը կազմվել է 1840 թ. ապրիլի 10-ին), ինչպես նաև տառատեսակներից, թղթից և ձևավորումից երևում է, որ լույս է տեսել «Կանոն» գործածականքի» հետ միասին, թերևս մեկ-երկու տարի առաջ կամ հետո։ Թարգմանիչը լավ շտիրապետելով հայերեն խոսակցական լեզվին, առատ ասպարեզ է տվել թուրքերեն և ռուսերեն բառերին ու գրաբարյան ձևերին, որի հետևանքով ստացվել է անկենդան, այսօրվա անվանումով «գրասենյակային» մի լեզու. «Մլքերի մտախիլների կարգելը ամենայն քաղաքում թահմիլաթանց ուղիղ և կանոնավոր ժողովելույն համար սկսանվում է այն դեպուդատների կոմիսայից միջնորդությամբ, որոնց որքան նշանակվին կախի ունեզնի նաշանիկներիցն այն խրատու համաձայն՝ որն պետք էր տալ ղրաժդանսկի գուրերնատորը։ Ամենայն կամիստ համար հինգ դեպուտատ ընտրվին, որոնց հարկավոր է դիտել այն միաբանության լեզուն, որն նոցա նշանակվում է»¹⁰։

¹⁰ Կանոններ Ղրուզինո-Իմերեթինսկի ղուբերնիայի..., Տփղիս, [1840], էջ 3։

Այլ երանգ ունի ներսիսյան դպրոցի կրոնական և հայկաբան Հակոբ Կարենյանցի «Ճառ վասն փրկագործ շարժարանաց և խաչելության տեառն մերո Հիսուսի Քրիստոսի» գրքուկի լեզուն: Դա խոսակցականից հեռու, գրքային, խիստ գրաբարախառն, որոշ չափով նաև արևմտահայերենի ազդեցությանը ենթարկված աշխարհարար է: Հավանաբար այս նույն լեզվով է Կարենյանցը երեսուն-քառասունական թվականներին, մոտ մեկ տասնամյակ, կրոնի դասեր կարդացել ներսիսյան դպրոցում. «Այս բաներս խոսելիցն հետո առավ աշակերտներն, մտավ Գեթսեմանի պարտեզն... մտածելով մարդկային մեղաց ծանրությանը, սատանային անբարտապանությանը, աշխարհի բոլոր ապականությանը, սկսավ խոսիլ, վախենալ և դողալ, սկսավ տրտմիլ և հոգալ...»¹¹:

Վերը բերված փաստերը հաստատում են անվիճելի այն իրողությունը, որ 1840-ական թթ. սկզբներին լույս են տեսել մի շարք աշխարհարար գրքեր, որոնք կարևոր սկզբնաղբյուրներ են ժամանակակից հայերենի անցյալ դարի առաջին կեսի պատմության համար:

МАТЕРИАЛЫ ПО ИСТОРИИ ВОСТОЧНОАРМЯНСКОГО ЛИТЕРАТУРНОГО ЯЗЫКА

А. М. ДАВТЯН

Р е з ю м е

В первые десятилетия прошлого века армянское духовенство, во главе с Эчмиадзинским Всеармянским католикосатом, всячески препятствовало тому, чтобы новоармянский язык—ашхарабар стал литературным, письменным, вместо старого-грабара. Вследствие такой позиции, в армянских культурных центрах, находившихся непосредственно в компетенции Эчмиадзина, новый литературный язык развивался очень медленно. Наоборот, в западноармянских центрах, далеких от его сферы, этот процесс шел несравненно быстрее. И поэтому, в первой половине века из 315 названий книг, вышедших на новоармянском языке, только 39 были изданы в восточноармянских культурных центрах. Точно так же из 30 журналов и газет того времени в западноармянских центрах было издано 20 названий—все на новом языке, а в восточноармянских центрах—10 названий, из которых лишь одно—на новом языке, а остальные—на грабаре.

Вышедшие на восточноармянском литературном языке книги еще подробно не исследованы. Некоторые издания, остававшиеся до сих пор вне поля зрения филологов и языковедов, являются важными первоисточниками по истории современного армянского языка того периода.

¹¹ Հ. Կ ար են յ ան ց, Ճառ վասն փրկագործ շարժարանաց, Տփղիս, 1841, էջ 3: